

Հասկանալի է, որ այսպիսի լեզուագիտական գոհարներով զարդարուած թարգմանութիւնը մի շաբթ անհեթեթութիւններ պիտի ներկայացնէ աշակերտներին, որոնց առանց այն էլ խեղ-ձուկ հայերէնը միայն կարող է աւելի ևս խառնաշփոթուել, օրինակ, այս տեսակ հատուածներից.

Եթէ միապետական իշխանութիւնը երկար գործեց Ֆը-
րանսիայում միահեծանութեամբ և առանց վերահսկողու-
թեան, դրա համար և այժմ ժլատաբար էին չափում իրա-
ւունքն և հնարաւորութեան չափ քիչ ազգեցութիւն էին
յատկացնում նրան (226):

Յարմար դիպուածում՝ քաղաքացոց իշխանութիւններին
ընդդիմանալու իրաւունքը դժուար էր սահմանադրութեան
մէջ որոշել մանրամասնօրէն, բայց իրաւունքների յայտա-
րաբութեան մէջ դրա ձևական ճանաչումը զուրկ չէր նշա-
նակութիւնից, աչքի առաջ ունենալով այն սպառնական
դիքը, որ բոնել էր Փարիզը, և յուզուած վիճակը տաք
գլուխների, որոնք բազմաթիւ էին ֆրանսիայում (230).

Բայց որ մէկ օրինակը բերենք—անչափ բազմաթիւ ևն
այսպիսի հատուածները:

Իսկ հայոց պատմութիւնից պ. Քարամեանը բերում է $\frac{5}{2}$
երես վայրիվերոյ տեղեկութիւններ, որոնք յամենայն դէպս
հեռու են «ճոխութիւններ» լինելուց... Ուրեմն, պ. Քարամեա-
նի թարգմանութիւնը այնքան թերի է և դժուարամարս, որ
անկարող է լրացնել պատմութեան դասագրքի այն մեծ պակա-
սը, որ զգացում էր մեր մէջ:

ԱՏ. ԼԻՍ.

12) ԱԿՕ. Հայկական սպազրութիւն: Մեր կեաներ, գրականու-
թիւնը անցեալում: Հասոր առաջին, XVI-XVIII դար Արտասահմա-
սնշակա լրագրից: Թիֆլիս, 1901. եր. XVI+451, գինն է 1 ր. 50 կ.

Անցեալ 1900 թ. յունիսի 11-ին Գերմանիայի Մայնց քա-
ղաքում տօնուեց Յոհան Գուտենբէրգի ծննդեան 500-ամեայ
յորելեանը: Գուտենբէրգը մարդկութեան առաջնակարգ բարե-
րարներից մէկն է—ապագրութեան հնարողը, ուստի և բոլոր
քաղաքակրթ աղգերը, որոնք վայելել են և վայելում են ապա-
գրութեան պտուղները՝ մասնակից եղան այդ հազուագիւտ յո-
րելեանի տօնին: Մենք, հայերս, անմասն չենք մնացել ապա-
գրութեան բարիքներից. բայց նրա հնարողի յորելեանին մա-
սնակցելու, մեր երախտագիտութիւնը արտայայտելու նկատմամբ

ոչնչից ոչինչ չարինք։ Միայն լէօն յիշեց և յիշեցրեց, որ մենք էլ պարտաւոր ենք մի բան անել այդ առիթով, և երբ ոչ որ արձագանդ չը տուեց նրա կոչին՝ ինքը մենակ ձեռնարկեց և զլուխ բերեց այս գործը, որ յունիսից սկսած հետզհետէ տպագրուեց «Մշակում» և այսօր մեր առաջ դրուած է առանձին հատորով։

«Յօտ շուր դար մեղ մեղ ապելեցրել է Գոտենբերգի գիւղը—ասում է հեղինակը ներածութեան մէջ։—Ն այսօր, երբ տօնում է մեր այդ ան-նման երախտասորի յօրելեանը, ի՞նչ կարող ենք մենք նուիրել նրա ան-մահ լիշտասակին։ Միայն մի բան—մեր երախտագիտութիւնը Դա է մեր միակ պասկը Գոտաենբերգի անյաւտ գերեզմանի վրայ։ Դակ թէ որքան թանգաղին է այդ պասկը, մենք այդ կարող կը լինենք չափել ու կշռել, երբ կիմանանք թէ ի՞նչ էր տպագրութիւնը մեղ համար։»

Աւելի յաջող միաք չէր կարող լինել—տպագրութեան հնարողի յորելեանի առիթով և ի լիշտասակ՝ գրել հայկական տպագրութեան պատմութիւնը։ Նոյն նիւթի մասին գրուած կան և ուրիշ աշխատութիւններ—բոլորը Վենետիկի Միսիթարեան Գար. Վ. Զարբհանէլեանի գործ։ Դեռ 1877 թուին սա իր «Հայ-երէն դպրութեան պատմութեան» երկրորդ հատորում զետեղել է մի գլուխ՝ «Հայկական տպագրութիւն» վերնագրով (եր. 274—352)։ Ալպա «Հայկական մատենագիտութեան» մէջ (1883 թ.), գրել է մանրամասն ցուցակ հայերէն հին տպագրութիւնների, նշանակելով տարին, տպարանը, գրքի անունը, հեղինակը և այլն։ Վերջապէս 1895 թուին նոյն հեղինակը առանձին գրով հրատարակել է «Պատմութիւն հայկական տպագրութեան», որ պարունակում է առաջին երկու աշխատութիւններն՝ աւելի ընդարձակուած և նոր գիւտերի յաւելուածներով։ Այս երեք աշխատութիւններն էլ շատ սահմանափակ ծրագրով են կազմուած—շօշափում են միմիայն տպարանների, տպագրիչների և տպագրութիւնների պատմութիւնը (այն էլ՝ ոչ բոլորովին կատարելապէս), կազմելով մենագրութիւններ (մօնոգրաֆիա), որոնք կարող են գեղեցիկ նիւթ և աղբիւր լինել ուսումնաբուութեան համար, բայց չեն կարող ծառայել իբրև ընթերցանութեան նիւթ։

Բոլորովին տարեկ ծրագրի և նպատակ է գրել լէօն իր գրքի համար։ Եա տպարանի վրայ չէ նայում իբրև լոկ արհեստանոցի վրայ, այլ իբրև մի միջոցի վրայ, որ տարածում է գրականութիւնը, այնպէս որ նա տպարանի նիւթական պատմութեան հետ զուգընթացաբար անում է և գրականութեան պատմութիւնը, և որովհետեւ գրականութիւնից անբաժան է կեանքը՝ ուստի հեղինակը աշխատում է լուսաբանել և հայոց կեանքը՝ որչափ կարելի է պարզ կերպով։ Հեղինակն ինքը յայտնուում է.

«Իմ ծրագիրն էր տալ պատմուածքներ մեր անցեալ մտաւոր, կուլուրական և քաղաքական կեանքից, Բայց ես այս աշխատութիմը անուանեցի «Հայկական տպագրութիւն», որովհետև տպագրութիւնն է այն առանցքը, որի շուրջը պտուտ են գալիս իմ պատմուածքները... նև միտք չեմ ունեցել տալ մի զիտնական աշխատութիւն... Ոչ! Մեն ժողովուրդը — ես ամենից առաջ նրան եմ աչքի առջև ունեցել—ոչինչ չը զիտէ իր անցեալի մասին: Իմ ուժերիս ներածին չափ օգնել երան մի մատչելի, կենդանի կերպով պատմուած գործով—այս էր իմ ամբողջ ձգտումն»:

Եւ յիրաւի, զիրքը ընթերցողների առաջ բաց է անում մի շարք պատկերներ մեր անցեալ կեանքից, մեծ մասսամբ տխուր և յուսահատական, երբեմն էլ յուսալից. ինչպէս մի կալէյտոսկոպի միջով՝ ընթերցողի աչքի առջնով անցնում են կանկթամուրն իր աւերածներով. տաճկական լուծն իր ենիշէրիններով ու հարստահարութիւններով. հայ գաղթականութիւնները, հայ վաճառականները, իրանց լաւ ու վատ կողմերով. Շահաբասն և հայոց Արագս գետը անցնելը. Եջմիածինն՝ աւերակ և բոյն դարձած գիշատիչ տղէտ կաթողիկոսների. Կ. Պօլսի պատրիարքներն ու տիրող բարոյական անկումը. Խարազէլ Օրին և հայոց վերածնութեան երկունքը: Սրանց հետ միասին գալիս են պատկերներ եւրոպական կեանքից—վերածնութեան դարը, տպագրութեան տարածուելը. Հառմ և կաթոլիկութիւնը, միսիօնարինները, կրօնական մեծ յեղափոխութիւնը, եղուփանները. Կ. Պօլսի նուանումը օսմանցոց ձեռքով, արեելեան հարցի սկզբնաւորութիւնը և նրա լուծման պատմութիւնը: Այս պատմական պատկերների մէջ զետեղուած են դարձեալ պատկերներ՝ հայկական տպագրութեան վերաբերեալ. հեղինակն ընթերցողին երբեմն տանում է Վենետիկ, երբեմն Լիվոնիոյ, այնտեղից Ամստերդամ, Կ. Պոլսի, Մարտէլ, Նոր-Զուղայ, դարձեալ Ամստերդամ և այլն, և նկարագրում է հայ տպագրութեան գործիչներին—Արգար Թօսիաթեցի, Սուլթանշահ, Խաչատուր կեսարացի, Մելքիսէթ վարդապետ, Ուկան երևանցի, Մատթէոս ծարեցի, Մատթէոս և Ղուկաս վանանդեցիններ, Թովմաս եպիսկոպոս Նուրիջանեան և այլն: Սրանց հետ գալիս են դարձեալ պատկերներ հայոց դրութեան, մտաւոր կեանքի, հայ աշուղների և մի քանի հեղինակների: Կարելի է ասել՝ ամբողջ զիրքը բաղկացած է բազմաթիւ պատկերներից, որոնց մէջ հեղինակը աշխատել է ներքին կազ հաստատել:

Ո՞րչափ յաջողուած են այս պատկերները: Լէօն լաւ ծանօթ է հայ ընթերցող հասարակութեան, և նրա ոճն ու ողին յայտնի են: Եթէ երևակայենք, թէ նրա գրուածքը մի երաժշտութիւն է՝ ապա կարող ենք ասել, թէ նրա նուագարանը բնական աստիճանից բարձր (զիլ) է լարուած. կամ եթէ նրա

գրուածքը նմանեցնենք նկարի՝ ասլա պէտք է ասենք, որ թունդ գոյներ է գործածում։ Միշտ նկարագրական, միշտ աշխայժ նա չէ կարող հանգիստ գրել. պատմելիս նա ճառ է ասում, ապացուանելիս՝ վիճում է; Նա զգում է սաստիկ, սաստիկ էլ լինում է նրա արտայայտութիւնը։

Մի փոքրիկ հատուած նրա գրքից՝ կը բացատրէ մեր խօսքը.

«Մելքիսէթի երկարամեալ կաթողիկոսութեան օրով վայրենացած հօգեւորականութիւնը չէր կարող նոյն իսկ մտածել և կոսկներ թողնել ապագրութեան մասին, Մելքիսէթին յաջորդեց նրա եղբօրորդի նահակը, որ պարտք համարեց իր տիրահոչակ հօրեղոր մի հարազա կտոր լինել—նոյնպէս շը պատուած հարկահաններով, նոյնպէս աստանդական՝ ժողովրդի տիրեր ծծելու համար և նոյնպէս անարգուած ժողովրդից։ Բայց Սահակը երկար չը կարողացաւ իր բաջագործութիւնները ցոյց տալ, չայ ժողովրդի մէջ արդէն այնքան գլուակցութիւն և ոչ էր հաւաքուել, որ նա կարողանում էր դիմադրել ու պատժել գոնի իր Վեղարաւոր խաներին» (եր. 107—8)։

Ո՞քան փոխարերութիւններ, չափազանցութիւններ, նմանութիւններ, հեգնութիւններ այս մի փոքր հատուածում, և դրանք շինովի, բռնի չեն, այլ բնական, ինքնաբուղիս, որով ստացւում է մի կենդանի, ազգու ոճ՝ յատուկ բանաստեղծութեան։ Այս ոճը յատուկ է Լէօփ գրչին. ինչ էլ որ լինի նրա նիւթը՝ միենայն է, նա միշտ նկարագրող, բանաստեղծ է։

Հեղինակի ոգին և ուղղութիւնը նոյնպէս անձանօթ չեն մնել. նրանք վաղուց արտայայտուել են զանազան առիթներով այլ և այլ գրուածքներում, մանաւանդ՝ «Մշակի» մէջ։ Անկեղծ սիրող քաղաքակրթութեան, ճշմարիտ քրիստոնէութեան, ազգերի համերախութեան, խղճի ազատութեան, արդար յարաբերութեան ազգերի և անհատների մէջ՝ նա միշտ զեկավարւում է այս սկզբունքներով՝ երբ պէտք է գնահատէ այս կամ այն իրողութիւնը, այս կամ այն անձը։ Ոչ մի կողմնակի դիտում, ոչ մի կոմպրօմիս չեն շեղում նրան իր այս բարոյական գաւառնքից։ Նա հաւասարապէս դատապարտում է ազիտութիւնը, կեղծիքը, անբարոյական քաղաքականութիւնը, ճնշումը—թէկուզ հայերի մէջ նրանք երեան գան, թէկուզ օտարների. կարելի է ասել՝ նա աւելի խստապահանջ է գէպի հայերը, որ հետեանք է նրա աւելի մեծ սիրուն գէպի իր ազգը և աւելի սրտացաւութեան՝ սրա պակասութիւնների պատճառով։ Վերը մի հատուածում տեսանք, ինչպէս է նա հարուածում հայոց «վայրենացած» հոգեորականութիւնն ու նրա «վեղարաւոր խաներին», որոնք «պարագ են համարում ժողովրդի արիւնը ծծել»։ Նոյն խիստ լեզուն նա գործ է ածում՝ երբ պատկերացնում է կաթողիկ եւ կեղեցու բացասական կողմերը և եղուիսների գործունէու-

թիւնը, առաջինի գործ դրած համատարած ճնշումը մտքի ու խղձի ազատութեան վրայ, երկրորդի ճարպիկ, բայց անբարոյական միջոցները՝ «ի մեծագոյն փառս Աստուծոյ»:

Այս համակրելի ուղղութեամբ նայելով պատմական երեւոյթների վրայ՝ տեղ-տեղ հեղինակը մտցնում է և ճշմարիտ, եթէ կարելի է ասել՝ «ուղղափառ» լուսաբանութիւն հայոց կեանքի մի քանի պատմական և դրական հարցերում: Մեր պատմութեամբ ու գրականութեամբ ամենից աւելի զրագուել են Վենետիկի Միթթարեանները: Զը խօսելով նրանց գիտական աւելի կամ նուազ պատրաստութեան ու մէթօդի մասին, որոնցից կախումն ունի աշխատանքի գիտական արժանաւորութեան աստիճանը՝ նրանք ունին մի քանի էական պակասութիւններ.— կեանքից կարուած վանականներ են, լեզուի հարցերում՝ պուրիստ են (լեզուի մաքրութեամբ չափազանց մեծ նշանակութիւն տուող) և դաւանութեամբ կաթոլիկ են: Այս յատկութիւնները թողնում են իրանց գրոշմը նրանց պատմական աշխատութիւնների վրայ, դարձնելով նրանց՝ հայեացքի կողմից սահմանափակ և ոգու կողմից կաթոլիկ, և մենք շարունակ կարդալով այդ աշխատութիւնները՝ ակամայ ենթարկուում ենք այդ հայեացքների և ոգու ազգեցութեան և ծուռ ու անարդար հասկացողութիւններ կազմում մեր պատմական անցեալի մասին: Լէօն ահա մի քանի հարցերում, որոնք առիթ է ունենում շօշափել իր գրքում՝ ուղղում է Միթթարեանների այդ սխալ հայեացքներն և ուղիղ տեսակէտով լուսաբանում անձերն ու իրերը: Այսպէս՝ լէօն ճիշտ և արժանաւոր գնահատութիւն է անում Ոսկան վարդապետի գործունէութեան, այս բազմաչարչար, բազմաշխատ անձի, հայոց Գուտէնբերգի, որ անասելի գիւտարութիւնների յաղթելով, հալածանքների, զրամական տագնապի, դաւանան ընկերների հարուածների տակ՝ քաղաքէք քաղաք թափառեցաւ Եւրոպայում՝ հայերէն գրքեր տպելու համար. հիմնեց ժամանակի լաւագոյն հայերէն տպարանը և տպագրեց առաջին անգամ Աստուածաշունչը հայերէն լեզուով և ուրիշ շատ գրքեր: Ան-ինչ այս նահատակ-գործիչը Միթթարեանների գրուածքներում արհամարհանքի է ենթարկուած այն պատճառով, որ իր գրաբար լեզուի մէջ մտցրել է լատինաբան աղաւաղութիւններ, որոնք ընդհանրացած տարածուած էին նրաժամանակ:— Նոյնպէս անխնայ հարուածում է լէօն Ալ. Պիդուկաթօլիկ կրօնաւորին—մի գործունեայ անձնաւորութիւն, որ նշանաւոր գեր կատարեց Լեհաստանի հայերին կաթոլիկ գարձնելու գործում, զիմելով այնպիսի միջացների՝ ինչպէս են կաշառք, խարէութիւն, սպասնալիք, բռնութիւն, աքսոր, մատնու-

թիւն և այլն *): Զը բաւականանալով իր հարուստ որսով կե-
հաստանում նա Ֆրանսիայում էլ մասնեց Ուկանին, թէ նա
տպում է հայերէն լեզուով հերետիկոսական (այսինքն՝ ոչ-կա-
թոլիկ) գրքեր, և ջանք արաւ, որ այդ տպագրութիւնը խափա-
նուի, կամ գոնէ Ուկանը պաշտօնապէս ընդունէ կաթոլիկու-
թիւն. Նրա ջանքով կաթոլիկ գրաքննիչն նշանակուեց Ուկանի
հրատարակութիւնների վրայ, որ այնքան աղէսների գուռ բա-
ցեց Ուկանի համար և խափանեց Նրա արդիւնաւոր գործու-
նէութիւնը: Ահա այս հոչակաւոր Պիգու կրօնաւորի մասին Մը-
խիթարեանները գրում են այսպէս: «Հայոց պատասխան կեցող
եկեղեցականաց մէջ նշանաւոր եղաւ հայրն Փիտու, որ անկեղ-
ծարար եւ հաւասար լուսամտութեամբ մայր եկեղեցոյ գիրկն ա-
ռաջնորդեց Լեհաստանի հայոց գաղթականութիւնը»:

Հեղինակը աշխատում է կենաքը և գրականութիւնը կա-
պել միմեանց հետ՝ իբրև փոխադարձարար միմեանց վրայ ազ-
գող գործօններ. աշխատում է պատմական անցքերը միմեանց
հետ կապել՝ իբրև պատճառ ու հետեանք: Սյս ուղղութիւնը այ-
ժը մտիրապետում է ընդհանուր պատմական գրականութեան
մէջ, և կէօն հետեւում է այս ժամանակակից մէթօդին, որով նը-
րա աշխատանքը աւելի հետաքրքրական է դառնում, միևնոյն
ժամանակ՝ գործը աւելի գժուարանում ու պատասխանատու-
դառնում: Տեղը չէ այստեղ խօսելու այն մասին, թէ ինչ բարդ
գործ է այսպիսի պատմութիւն գրելը և ինչ ահազին, երբեմն
անյաղթելի գժուարանութիւններ են ծագում պատմագրի առաջ.
մենք բաւականանում ենք մեր ընդհանուր տպաւորութիւնը
յայտնելով, թէ հեղինակը այս կէտում, մեր կարծիքով, ամեն
անգամ չէ յաջողել: Լիովին գոհացնող լուսաբանութիւնների
հետ պատահում են և այնպիսիները, որոնք չեն գոհացնում մեզ,
և մենք կարգալով այս կամ այն բացատրութիւնը մի պատմա-
կան կամ գրական երեսյթի մասին՝ մեր մտքում մի հարցական
նշան ենք դնում, տարակուսանք յայտնում: Լուսաբանութեան
անբաւարարութիւն ենք համարում և խօսքի այն բացառցական
ձևը, որին յաճախ դիմում է հեղինակը և որը կարելի է ձեա-
կերպել «թէպէտի—բայց» բառերով: Օրինակ՝ նա նկարում է
կեանքի կամ մտքի մի խաւար պատկեր. այդ պատկերից յետոյ
մի լուսաւոր պատկեր՝ իբրև շարունակութիւն և ծնունդ առա-
ջնիք: Բնական տրամաբանութեամբ՝ մենք խաւարից պէտք է

*) Նրա այս լատինականութիւնները երկում են հինգ ալին լիշտակարա-
նում, որ ինքը Պիգուն է գոել: (Տես „Բոնի միութիւն Հայոց Լեհա-
տանի“ գրքի առաջին մասը, եր. 1—135):

սպասէինք խաւար, «բայց», (իբրև բացառութիւն) լոյսի ենք հանդիպում: Եւ մենք ի հարկէ չենք հաշտուում այս «բայց»-ի հետ և ասում ենք. երեի խաւարի մէջ եղել են և լուսաւոր երեոյթի սաղմերը, որոնց հեղինակը չէ նկատել, ընդհանուր խաւարի տպաւորութեան տակ. իսկ յետոյ, երբ այդ սաղմերը աճելով լուսաւոր պատկեր են տուել՝ հեղինակը չէ կարողացել նրան այլապէս հասկանալ՝ եթէ ոչ իբրև մի «բայց»: Մեր սովորութեան հակառակ՝ այս կէտը պացապուցանելու համար չենք բերում օրինակներ, որովհետեւ օտիպուած կը լինէինք պատմական քննութեան մէջ մտնելու, որ առանձին յօդուածների նիւթ կարող է լինել և ոչ մի մատենախօսական համառօտ ակնարկի: Միայն պէտք է ասենք, որ անբաւարար, նոյն-իսկ սխալ լուսաբանութիւնը այնպիսի գաւառում, ինչպէս մեր պատմական անցեայն է՝ անխուսափելի է, և հրաշք կը լինէր՝ եթէ այդ մոռացուած, անմշակ, տեղեկութիւններով աղքատ անցեալը հէնց գրչի առաջին փորձով կատարեկապէս լուսաբանուէր իր բոլոր խաւերում: Մենք չորհակալ պէտք է լինենք լէօփից, որ ժամանակից մէթօդի լոյսը ուղղել է մեր պատմութեան այդ խաւար էջերի վրայ և շատ բան լուսաւորել է յաջողութեամբ. չորհակալ լինինք և չը յաջողուած կամ կասկածելի բացատրութիւնների համար—որովհետեւ հէնց դրանցով նա հարցասիրութիւն, հետաքրքրութիւն է շարժում ընթերցողների մէջ:

Գիրքը, իր նիւթով, շօշափած հարցերով, արտայատած հայեացքներով, աշխոյժ, կենդանի պատմուածքով ընթերցանութեամ շատ հետաքրքրական նիւթ է ոչ միայն «ժողովրդի» համար, այլ և ինտելիգենտ դասակարգի համար, որի վերաբերութեամբ էլ սխալ չի լինի ասել հեղինակի խօսքը, թէ «ոչինչ չը գիտէ իր անցեալի մասին»:

ՍՏ. ՄԱԼԻԿԱՆԵԱՆՑ

13) Sof. Ն. ՏԱԿԱՆԱՎԵԱՆ.—Տարուինականութիւն. 9 տպագրութիւն. Կ. Պոլիս 1901 թ.

Դոկ. Տաղաւարեանը իր գրքոյկի մէջ աշխատել է շօշափել համարեա այն բոլոր ինդիբները, որոնք կապ ունեն դարվինիզմի հետ: Գրքովիլ բաղկացած է երեք մասից. 1 մասում հեղինակը ծանօթացնում է ընթերցողին այն հայեացքների հետ, որոնք ընդունուած էին բնագիտութեան մէջ («Տեսակների» մասին) մինչև Դարվինի աշխատութիւնների լոյս տեսնելը; Երկրորդ